

լինել չի կարող իսկ նախապաշարումը հաւատի ամենամեծ թշնամին է, որ նորա խեղածիւրումը լինելով՝ շատ անգամ սխալմամբ իսկական հաւատի տեղ է ընդունուում: Մենք ամէնքս գերի ենք հաղար ու մի նախապաշարումներէ որոնք բազմատեսակ աղբիւրներէց են յառաջ գալիս: Ինչիցն է օրինակ, որ ներկայ սերունդը հաւատ քիչ ունի՝ գերբնական աշխարհի գոյութեանը հաւատալ զրեթէ չի կարող, միթէ նորանից, որ գիտութիւն և քաղաքակրթութիւն յառաջ են գնացել, մարդիկ զարգացել են, ամենեւին: Իրերի բնական ընթացքով զբաղուող գիտութիւնը ինչպէս կարող է հերքել կամ հաստատել այն, ինչ որ իւր իշխանութեան սահմանից դուրս է: Եթէ ևս իմ հոգեոյ խորքում զգում եմ մի գերբնական զօրութեան ազդեցութիւնը, կամ մի գերբնական էակի մերձուորութիւնը՝ որ բնագէտը կամ որ փիլիսոփան կարող է ապացուցանել, թէ իմ զգացումը խարուսիկ է և իմ ծանաչած զօրութիւնը գոյութիւն չունի: Բի՛ն են միթէ զարգացած մարդիկ, որոնք քրիստոնէական լուսաւոր հաւատը ծաղրում են, բայց իրենք հաւատում են ամէն տեսակ խաւարային ոյժերի՝ հաւատում են, թէ երբ մի քանի մարդիկ մութ սենեակի մէջ ձեռները սեղանի վերայ դնեն, այդ սեղանը ինքն իրեն կշարժի, թէ ինչ ինչ մահկանացուներ հրաշալի զօրութիւն ունին մեռած հոգիները դուրս կանչելու, նոցանից զանազան զաղանիքներ իմանալու, և ինչ որ մի մարդ չկայ, որ բաւականանայ այս աշխարհի մասին ունեցած ծանօթութիւններով և չձգատ աւելին իմանալու, ում հաւատն այդ աւելին չէ ընծայում՝ նա անպատճառ նախապաշարումներէ մէջ կընկնի: Մի գիտնական, որ պնդում է, թէ Աստուած չէ ստեղծել աշխարհս և ոչ մի մասնակցութիւն չունի նորա ընթացքի մէջ, այլ ամէն ինչ ինքն իրեն է յառաջ եկել և բնական կարգով զարգայել՝ ոչ մի փաստ չունի ի հարկ է դորա համար, այլ ժամանակակից կրթութեան տուած նախապաշարումներով է առաջնորդուում: Բաւական է վերացնել այդ նախապաշարումները, որ հաւատըն իւր դործը սկսէ, բաւական է յաղթել

միայն այն մեծ նախապաշարման, թէ գերբնական ոչինչ չկայ և չի կարող միջամտել մեր կեանքի մէջ՝ որպէս զի ամէն քայլափոխում հրաշք և աստուածային զօրութեան ներկայութիւն տեսնենք:



ԹՈՒՂԹ ՀԱՅՈՑ Ի ՊԱՐՍՍ,  
 ԱՌ  
 ՈՒՂՂԱՓԱՌՍ.

ՍՐԲԱՍԷՐ և Ճշմարտաւէր և սուրբ հաւատոց, և առաւել Քրիստոսին՝ ծառայեցելոց, տէրանց մերոց և եղբարց սրբոց հաւատակցաց՝ Տէր Պանիէլ Քարմա եպիսկոպոս և Մաղքայ և Շաւտայ քովրեկոպոսունք, և Աբայ և Մարի երիցունք, Միր Հորմիզդ և Արղահայ սարկաւազունք, և ազատ մարդիկ՝ Արտաշիր և Բրատոկ և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք յԱրման շահաստանի, ի Քարմեկան շահաստան՝ ի Պարմենանան նահանգ, Յոհան երիցապետ և ազատ մարդիկ, և Արազպանգակ ի Մազոկան տաճկաց պահապետ, և Հարթայ ի Մուշեղեան և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք, որք ի Պերոզ—Շապուհ ի տաճկաց քաղաքի, Յովնաթան անապատաւոր, և այլ սուրբ հաւատացեալք քրիստոնեայք յԱսորեստանի և ի Խուժաստանի և ի Հերթ, և ի Նոնաբարսագէ, որ ի կնի (Որոգենէս?) անապատաւոր, և Սահակ Բղադ շահաստանի քովրեկոպոս, Յակոբ Բեղեկաթարա և որ այլ սուրբ հաւատացեալ քրիստոնեայք յԱսորեստանի Բժբին նահանգ, և Բասագէ Իմաթեան անապատաւոր, և ազատ մարդիկ՝ Գնեբա և այլ հաւատացեալ քրիստոնեայք Նոշիրականին ի Նինուէ նահանգ, և առ ամենայն եպիսկոպոսունս և առ քովրեպիսկոպոսունս, և առ երիցունս և առ սարկաւազունս, առ անապատաւորս և առ աշխարհականս, առ ազատս և առ գեղջաւագս, առ մեծամեծըս և առ փոքունս, և առ ամենայն հաւատացեալս Պարսից աշխարհի, որ ընդ Պաւատայ արքայից արքայի ընդ իշխանութեամբ էք — ի Մեծաց Հայոց ի Բարգենայ ի Հայոց եպիսկոպոսապետ և ի նորին աթոռակցաց՝ ի Մերշապչոյ Մամիկոնից եպիսկոպոսէ, ներսեսէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Տեառնարոյ Հարքայ եպիսկոպոսէ, ի Սամուելէ Բզնունեաց եպիսկոպոսէ, ի Փովկասայ և ի Սամուելէ Բասենոյ եպիսկոպոսաց, ի Թաթլոյ Աշարունեաց եպիսկոպոսէ, ի Ղըշանայ Խոսրոսունեաց եպիսկոպոսէ, ի Աղատեայ Տայոց եպիսկոպոսէ, ի Տաճատայ Արշամունեաց եպիսկոպոսէ, ի Պանիէլէ Ռուշտու-

նեաց եպիսկոպոսէ, ի Յափկանէ Մոկաց եպիսկոպոսէ, ի Խարբայ Արժրուենաց եպիսկոպոսէ, ի Շահիէ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Սահակայ Պալունեաց եպիսկոպոսէ, ի Պաւղոսէ Գնունեաց եպիսկոպոսէ, ի Մովսիսէ Չարեհունանի եպիսկոպոսէ, ի Պաւթայ Տմորեաց եպիսկոպոսէ, ի Պանիւղէ Անձեհայ եպիսկոպոսէ, ի Թէմրա Մէհնունեաց եպիսկոպոսէ — զնոյն համարձակագէս բերելով զողջոյն յաստուածապաշտ և յուղղափառ ճգնաւորաց եկեղեցւոյ, երիցանց և վանականաց և միայնացեալ մոնաղանց, և ի բարեպաշտ պետաց և իշխանաց Հայաստան աշխարհիս՝ որ բերեն զուղղափառ հաւատ յինքեան՝ Վարդ Մամիկոնեան, Սահակ Կամարական Արշարունեաց տէր, Ըսպանդիատ հայոց ասպետ, Արտաշիր հայոց մախոզ, Զիկ Վանազայ տէր, Մանգեն Ամատունեաց տէր, Միրոս Պալունեաց տէր, Վարդընբրեհ Քաշտակարանի տէր, Վստամ Ապահունեաց տէր, Կնէլ Գնունեաց տէր, Բաշխեն Վահանունեաց տէր, Արտաշիր Սիւնեաց տէր, Ըտրնբրեհ Ռշտունեաց տէր, Արտաշիր Արաւելիւնից տէր, և յնոյ յամենայն յուղղափառ իշխանաց՝ ի մեծաց և ի փոքունց, և որք ընդ նոցին իշխանութեամբ են, ի սուրբ, կաթուղիկէ և յասպեղական եկեղեցւոջ՝ որք զճըմարիտ հաւատս ունինք ի Հայր, և յՈրդի, և ի սուրբ Հոգին՝ յամենայն Հայաստան աշխարհէս, յեպիսկոպոսաց, յերիցանց և ի վանականաց, յազատաց և ի շինականաց՝ քո Ձեր Աղղափառ Սրբութիւնդ, սիրովն Քրիստոսի ուրախմալ, Վասն զի ութնասներորդ ամին Կաւտայ արքայից արքայի մինչդեռ ես Բարգէն հայոց եպիսկոպոսապետ ամենայն եպիսկոպոսաւք և վանականաւք և նախարարաւք ժողովեալ էաք յԱյրարատ գաւառ, յոստանն Հայաստան աշխարհիս ի Պունի քաղաք՝ եկեալ հասին առ մեզ արք ոմանք, որք ասացին զինքեանս լինել ի կողմանցդ յայդցանէ, ի Տիրսոնէ և ի Գարմիկանէ և ի Վեհարտաշիր նահանգէ, ծանուցանելով մեզ ստուգագոյն զանուանս և զտեղիս բնակութեան իւրեանց՝ Վամուիէլ Մահարձայ վաներէց ի Կարմիկան նահանգէ, Էմաւոն Բերդոշմայ երէց և Ախայ երէց ի Աերոզ - Շապուհ ի տաճկաց քաղաքէ՝ ի Վեհարտաշիր նահանգէ, և Իմարայ զպիր և այլ ընկերք նոցին և կացեալ յատենի յակդիման ամենեցուն ունէին զիր ձեռս, որով խոստովանէին ի վերայ ուղիղ հաւատոյ, ընդ բազում աշխատութեամբ զանձինս արկեալ, առ ի գտանել զճըմարիտ և զուղղափառ հաւատ սրբոյ Երրորդութեան, եւ վասն նորին համարձակութեան առեալ թագաւորական հրովարտակ զԿաւտայ արքայից արքայի յորում առեալ իշխանութիւն, զի ըստ կամաց և խնդրոյ ստուգութեամբ քրիստոնէութեան հաւատ յանձինս հաստատեցի՝ ըստ կանոնի և գիտութեան աշխարհին հոռոմոց և հայոց, վրաց և

աղուանից, և մի վայրապար բանիւք և աւելորդ իմացուածովք իրամատեցի և սահման առ ի Քրիստոս հաւատացիլոց, եւ զպատճառս զաւոյն առ մեզ ուսուցին այսպէս, եթէ ճառայեմք մեք Կաւտայ արքայից արքայի և վասն ամենայն բարոյ թագաւորին և որք ընդ թագաւորութեամբ նորա հանապազ փոյթ ունինք յանձինս, ըստ կորի մերում խնդրել յԱստուծոյ զատողջութիւն և զխաղաղութիւն և զերկայնակեցութիւն, և որ միանգամ այսպիսի բարիք են՝ զի շնորհեցի յԱստուծոյ, եւ հաւատ ունինք զայս ի նախնեաց հարց մերոց զճըմարիտ՝ երեք հարիւր տասն և ութիցն իՆիկիւս ժողովելոցն իջժամանակս թագաւորութեան երանելոյն Կոստանդիանոսի՝ զոր ամենայն տիեզերք ընկալան, և ի նոյն հաստատեցաւ սուրբ և ընթանրական կաթուղիկէ եկեղեցի, զոր և ի սկզբանն իսկ տերունեան բարբառն վարդապետեաց աշակերտելոցն ասելով Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հաւր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյ, որ բարձր և հոգեակաւոր կնիք եղաւ ի վերայ ամենայնի, Չայս հաւատս ստուգեալ ունէր աշխարհս մեր միաբանութեամբ և ոչինչ ամենեկն արատաւորութիւն յայտնի երևեցաւ մինչև ի քսաներորդութեաներորդ ամին թագաւորութեան Աերոզի, Իսկ ի ժամանակին յայնմիկ երևեցաւ խմոր չարութեանն, որ էր ծածկեալ յանձինս անսուրբս, որք և սկսան այնուհետեւ պղտորել զյստակ հաւատ ճըմարիտ Երրորդութեանն, պատրել զանձինս անհաստատս մարմնաւք ցանգութեամբք, և Ետարածեցաւ երկրայութիւն և հիւանդացան բազումք զախտ անհնարին, մինչև ի տեղիս տեղիս ժողով արարեալ զխաւորաց հայհոյութեան հերձուածոյն՝ երբեմն ի Պունա - Շապուհ, երբեմն յԱտրեստանի Ակակ և Բարձումա և Մանի և Յոհանան և Պաւղէ և Միքայ և այլք նոցին հաղորդք՝ զՆեստորի և զԻորգորի և Թէոդորոսի միաձայնելով զմի ասացուածս և զամպարշտութիւնս անձանց, եւ այսու ձեռնարկութեամբ յամենայն ժամ առաջի իշխանաց և դատաւորաց բազում աշխատութիւն և փտանգս հասուցանեն յանձինս մեր և այլոց ամենեցուն ուղղահաւատից, որ յաշխարհին մերում են, և ոչ կարացեալ մեր տանել այնպիսի չար անհնար և դառն հայհոյութեան՝ փութացաք առ թագաւորս ցուցանել, Հասաք և առ ձեզ վասն նորին փտանգի և նեղութեան՝ գտանել ազնականութիւն, վկայութեամբ աստուածային գրոց, որպէս զի հաստատուն կացցեն և անշարժ սրբոց հարցն աւանգութիւնք և պատուէրք, և մի հանապազորդ նեղութիւնք հոգեկան և մարմնական տարակուսանաւք վասն այդպիսի իրաց տառապեցուցէ զմեզ, Տեղեկեցեալք զայս ամենայն առ ի բոցանէ՝ է ինչ որ բանիւ և է ինչ որ գրով զոր և ինքնատես եղեաք՝ երանելիս այսուհետեւ

Համարիմք զանձինս ձերով աստուածաւորք, որք զբարի նախանձ նախաձեցայք, և զերանելի և զցանկալի կեանս անձանց ընտրեցէք ու զզափառ Հաւատով և կատարեալ վարուք աստիճանութեան, որք զփափագելի զբարբառ Փրկչին զանազան սիրողութեամբն զԱստուած երեւեցուցէք տեսանողաց՝ և թէ անարգելով զնշիցն փափագ, և թէ արհամարհելով զփառս մարդկեղէնս, և թէ ազբասանալ վասն Քրիստոսի, և թէ սրբութեամբ սրտի տեսաւ լինել Աստուծոյ՝ և ևս որ առ նոսին կատարելագոյնք ինչ Քրիստոսէ, և քրիստոսասիրաց աւետարանել, Արդ, հարկաւոր է և մեզ զրդիսումն սրբոյ Հաւատոյն, զոր երանելի հարցն ի նիկեայ ժողովեցոցն ՅՓՎ. եպիսկոպոսացն ընկալեալ պարկեշտութեամբ և առանց զայն թաղութեան զսոյն աւետարանել: Ընդ որս պատահեաց ըստ աստուածային շնորհաց ի սուրբ ժողովն երանելի հայրապետ մեր Արիստակէս և ընկալեալ ի սուրբ հարցն բողոքովիմք զհասան ճշմարտութեան երեք յաշխարհս ճշմարտութեամբ. զոր առեալ ի նմանէն հայոց, և նովին հաւատովք լուսաւորեցար: Եւ ի նմանէն յաջորդեցաւ մինչև ցայժմ՝ ձեռնադրութիւն քահանայապետութեան աշխարհիս հայոց, և կամք հաստատուն ի նմին, Եւ այսպէս. Հաւատամք ի մի Աստուած, Հայր ամենակալ, ամենեցուն երեւելաց և աներևութից Արարիչ, և մի Տէր Յիսուս Քրիստոս, յԱրդին Աստուծոյ՝ ծնեալ ի Հաւրէ Գիթիմն. այսինքն է ի գոյութենէ Հաւր. Աստուած ճշմարտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ. նոյն ետիւն Հաւր, որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի որ վասն մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան էջ և մարմնացաւ ի սրբոյ կուսեն Գարիամայ. չարչարեցաւ վասն մեղաց մերոց, մեռաւ և յերրորդ աւուր յարեաւ. ել յերկինս, նստաւ ընդ աջէ Հաւր, զայ զատել զկենդանիս և զմեռեալս: Եւ վասն այնոցիկ ոյք ասեն՝ էր երբեմն զի չէր, և մինչև ծնեալ էր չէր, և զի յոչնչէ եղև կամ իրրև յայլմէ ետիւնէ կամ ի գոյութենէ համարին թէ իցէ, կամ փոփոխելի կամ անցանելի զԱրդին Աստուծոյ՝ զնոսա նզովէ կաթուղիկէ և առարեւական կեկոզցի, — Եւ այլ սահման արտաքոյ այսորիկ կանոն ոչ է, և ոչ ընդունիմք. Քանզի և վարդապետն երկնային Սաւղոս յոյժ զգուշացուցանէ զմեզ յերկրաւոր իմաստից մարդկան և ի մոլար խաբուութենէ, Բազում են վկայութիւնք սուրբ Գրոց, հոլովագոյն և սրբոց հարց ու զզափառաց լուսափայլ վարդապետութիւնք, որովք լուսաւորեալք լուսաւորին և զցենուն մխիթարութիւն վհատեալքն հոգւով՝ ի սէր և ի յոյս և ի հաւատս սրբոյ Երրորդութեանն, հիմնաւորեալ որ կենդանութիւն է և պաշտպանութիւն հոգւոյ և մարմնոյ, Չայս հաւատ Հոռոմք և մեք Հայք և Վիրք և Աղուանք ունիմք: Բայց որպէս ասացին առ մեզ ա-

ռաքեալքն առ ի ձէնջ եղբարք՝ Սամուէլ վանական, Ըմաւոն երեց և այլ նոցին ընկերք, թէ Բարէ ասորեստան իկաթուղիկոս և այլ որ եպիսկոպոսք են նեստորիանոսք զայս խաւսին. երկուս որդիս ասեն լեալ Աստուծոյ՝ զմին Աստուածն Բանն հաւասար Հաւր, որ էջն յերկնից, և այլն Յիսուս մարդ մահկանացու նման մեր, որ ծնաւ ի Գարիամայ, և վասն զի արգարացաւ՝ աւելի քան զամենայն մարդ պատուեցաւ և շնորհաւք կոչեցաւ Արդի Աստուծոյ՝ անուամբ միայն. և ոչ Արդի Աստուծոյ՝ և ոչ հաւասար Հաւր, այլ մարդ էր արարեալ մահկանացու որպէս զմեզս, և վասն զի ազնեաց նմա Հոգին սուրբ՝ կարաց յաղթող լինել սասանայի ցանկութեանց, և վասն արդարութեան նորա և վասն բարի գործոց արժանի եղև շնորհի լինել տաճար Աստուծոյ Բանին, Եւ ասեն թէ արժանի է բաժանել և ասել յայտնապէս Աստուած կատարել և մարդ կատարեալ, այսինքն է՝ Աստուած կատարեալ զՅիսուս Քրիստոս, և վասն զի սիրեաց զնա, արժանի արար զնա պատուել ընդ իւր յերկրագոյթութիւն, և պատուեցաւ մարդն որ ետո շնորհս յինքն, և նշանս և սքանչելիսն զոր առնէր Բանին Աստուծոյ՝ որ էջն յերկնից և բնակեաց ի նմա այսինքն է ի Յիսուս և զաւրացան ի նմա սքանչելիքն զոր առնէր, և զամենայն ցաւս և զխոնարհութիւն ունէր յինքեան, և գտաւ մահկանացու որպէս զմեզ լեալ, ի մարդկան ազգէս հաւասար իւր՝ Բանին Աստուծոյ Արդի Աստուծոյ, Եւ ասեն, ոչ վասն Յիսուսի եկն ձայնն յերկնից ի Յորդանան՝ Գա է Արդի իմ՝ սիրելի ընդ որ հաճեցայ. այլ ի Բանն Աստուծոյ էջ, որ է հաւասար Հաւր, որ էջ յերկնից և բնակեաց ի նմա, Եւ ասեն, զըրբաքն փակելովք յորժամ եմուտ առ աշակերտսն, ոչ էր փակեալ զգուրսն, այլ աշակերտացն յերկիւղէ հրէիցն ի բաց թողեալ էր զգուրսն, Եւ ասեն հերձուածողքն, թէ Յիսուս Քրիստոս մարդ էր մահկանացու, արարեալ հաւասար մեր, և ոչ յերկնից իջեալ և ոչ յերկինս ելեալ, այլ որպէս Նդիայ և Ենովք վերացան յաւզս, և չև ևս տեսեալ զԱստուած, և ոչ տեսանն զնա մինչև լինի յարութիւն, Չայս ասեն նեստորիանոսքն ընդդէմ մեր՝ ուժաւորութեամբ գրոց Գիողորի և Թէողորի և նեստորի և Թէողորիտի և Հարայի. կանոն է, զոր եզին Ակակ և Բարձուձէ, և Մանի և Պաւղի, և այլ ընկերք նոցուն, Եւ այդպէս ասեն, թէ Հոռոմք և Հայք և Վիրք և Աղուանք զնոյն կանոն և հաւատ ունին զոր մեքս ունիմք, Չայս լուսաք ի սոցանէն թէ ասեն նեստորիանոսքն, և զի կամեցայք ի մէնջ վասն նորին իրաց ուսանել՝ ծանուցանեմք ձեզ, և թէ Հոռոմք և մեք Հայք և Վիրք և Աղուանք զհայհոյութիւնս զայս ոչ ընկալաք և ոչ ընդունիմք, և ոչ հաղորդիմք, և ոչ հաւատամք, այլ և նզովեմք որ այսպէսն ասեն և ուսուցանեն, Արպէս

Պաշտոն առաքելալ ասաց, եթէ որ աւետարանեցէ ձեզ աւելի քան զոր առնէքն, նզովեալ լիցի, և դարձեալ զնոյն երկրորդելով ասէ. Այլ թէ մէք կամ հրեշտակ յերկնից աւետարանեցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ՝ նզովեալ լիցի. Եւ զնոյն հաստատեցին աստուածային շնորհաւքն լցեալ երանելի հարքն. ՅԺԸ. եպիսկոպոսունքն ժողովեալ ի Կիկիայ, միաբանեցին նմին կանոնի և ճ և Ծ եպիսկոպոսունք ուղղափառք ժողովեալք վասն նորին խնդրոյ ի Աստանդիանուպոլիս, որոց մէք միաբանեալ նզովմք զհակաաղորդան այն ճշմարիտ հաւատոյ և կատարեալ աստուածաշնորհ կանոնի. Եւ զայս խնդիր ճշմարիտ հաւատոյ գրեցաք և կնքեցաք ես Բարդէն Հայոց կաթմուղիկոս ամենայն եպիսկոպոսաւք, իշխանաւք և նախարարաւք Հայաստան աշխարհիս. Եւ Սերգիս որում Բարդէն անուն է, Արդիշոյեան խուժիկ ի Հոշորի շահաստանէ, ի նմին յանջմնի՝ առաջի մեր ամենայն Հայոց ասաց թէ այդ այդպէս է. լսեմ յաղազս այդ իրաց և ի Խուժաստանի հերձուածքն են, և յայսմ հաւատոյ ինձ հաւատոյ նամակ պիտի, և հաւատոյ նամակ հաստատ և ճշմարիտն և զանշարժ արարէք, և ես Բարդէն Հայոց կաթմուղիկոս և ամենայն եպիսկոպոսունք, և Վարդ Մամիկոնեան, և այլուք միանգամ իշխանք և նախարարք էաք, գրեցաք հայերէն և պարսկերէն՝ և կնքեցաք մերով մատանեալ. Սամուէլի և Համառնի և Աջհայի և Մերայի և այլ ընկերակցաց առեալ ի մէնջ էր, զոր ի ձեռն Սերգեանայ կտուն, և և զայս հաւատո նամակ ընդ իւրեանս առին յաշխարհ իւրեանց, Զնաւասար և զնաւաթոնն յամենայնի պիտուս և զճնաւաղս ի մէնջիցէ ի Բրիտանոս, ով զուստ ուղղափառաց:

Այս կարեւոր յիշատակարանն անուած է Կ. Պոլսոյ Անտոնեան միաբանութեան գրադարանի նշանաւոր «Թղթոց գիրք» ձեռագրից՝ որի մեզ ուղարկած ընդօրինակութեան վերայ միայն կէտադրութիւնն ենք աւելացրել եւ խիստ աչքի ընկնող տառասխալներն ուղղել: Խորին շնորհակալութիւն ենք յայտնում Պատուարժան Միաբանութեան, որ քարտիրարութիւն էր տուել այս եւ մի շարք այսպիսի պատմական մեծ արժէք ունեցող թղթեր ընդօրինակել մեզ համար: Այդ թղթերը շատ լոյս եւ սիրում մեր եկեղեցւոյ պատմութեան ամենամութ շրջանների վերայ եւ մի քանի պատմական—դասական խնդիրների լուծմանը նպաստում: Իրոնցով կարող ենք յաջորդ համարից սկսած:

ԴՐՈՒՋՆԵՐԻ ԿՐՕՆԸ. \*

Պատարկում և Փրանսիայում մի ժամանակ տարածուած էր այն զրոյցը, թէ Դրուզները մի Փրանսիական գաղթականութեան մնացորդներ են, որ Մաշակրաց արշաւանքների միջոցին Դրէօքս կոմսի առաջնորդութեամբ հաստատուել է Լիբանանում: Այդ զրոյցից ճարպիկ կերպով օգտուեցաւ ԺԼ. դարում Դրուզների իշխան Փախըրէզզինը, որ բաւական ընդարձակ երկրի տիրացած լինելով՝ անձամբ վենետիկ և Ֆլորենցիա եկաւ և այդ հարուստ վաճառաշահ քաղաքների առելութիւնը գէպի իւր թշնամի տաճիկներն աւելի ևս գրգռել աշխատեց: Սակայն հարկաւ այդ զրոյցը ոչինչ հիմք չունի և զուցէ յառաջ է կիկ մասամբ Դրուզների իրենց ծագումը խորհրդաւոր մթութեան մէջ ծածկելու և մահմեդականութեան հետ ունեցած կապերն ուրանալու ջանքից: Մեր դարում միայն կարելի եղաւ հետզհետէ որոշ գաղափար կազմել նոցա կրօնի մասին, երբ նոցա կրօնական գրքերն սկսեցին եւրոպական մատենադարաներ բերել, մանաւանդ երբ 1830 թ. -ին Ռուհիմ փաշան Լիբանանը գրաւեց և միանգամից մեծ քանակութեամբ այդպիսի գրքեր ձեռք ընկան: Այժմ Դրուզներն աշխատում են ամեն կերպ ամուր պահել այդ գրքերը և թոյլ չտալ, որ օտարներն աւելի մօտ ծանօթանան իրենց կրօնին, բայց դրա փոխարէն մշտական կենդանի հաղորդակցութիւն է տեղի ունենում եւրոպացի միսիոնարների և նոցա մէջ, և այդպիսով շատ բան հրապարակ է կելում:

Ծագմամբ Դրուզների կրօնն անշուշտ սերտ կապ ունի մահմեդական Շիա աղանդի հետ: Եայտնի է, որ այս աղանդին պատկանող Փաթմայեան հարստութիւնը Ժ. դարում տէր պարձաւ Եգիպտոսին և իւր իշխանութիւնը տարածեց նաև Ասորիքի մեծ մասի

\* Քաղաւժ Christliche Welt 1898, № 31 և 32 մի յօդուածից, որի հեղինակն օգտուել է The Autobiographie of Theophilus Waldmeier գրքից: Իսկ այս գիրքը զրոյք՝ Թէոփիլոս Վալդմայէր, երկար ժամանակ իրրե միսիոնար ապրել է Դրուզներէ մէջ: